

ՄԱՍԻՍ

Շ Ա Ք Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50րդ ՏԱՐԻ, ԹԻԻ 1

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

6 ՅՈՒՆՈՒԱՐ 1901

Մասիս շաբաթաբերքի սարեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌԱՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի : Թղթատարական ծախսը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն :

Մասիս հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առօրէն, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխափան և ու Պահէ-Գաբուի ջրավանառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավանառներուն հով :

Չեռէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԵ

در علیہ غلضہ « ماسیس » غزتیسی ادارهسی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»Ի

Կ. Պոլիս, Ղալաթիա, Խորասու նկերան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԻՒՆԻՅՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐՁ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչև 1899ի վերջը հատուցեալ վնասք	240.000.000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19.500 000 »
Գրամագրուիս եւ պահեստ	105.000 000 »
Ապահովագրեալ զրամագրուիս	18.000.000.000 »

ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

Մինչև 1889ի վերջը հատուցեալ վնասք	99.000.000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253.000 000 »
Գրամագրուիս եւ պահեստք	150.000.000 »

որ բնթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորուրիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ԱԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ .

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի զերազանց քան ուրիշ որ եւ է ընկերութեան պայմանները : Շահարաժիններու ասոր է ասոր անմիջական վճարում , որով Իւնիօնի ապահովագրուողք Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբուրիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք . որ Եանարաժիններու բարգման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎԼԱՍԱԿԱՐ զրուրեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան զրամատուան է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալարա , Թահեսպուրուն խան , Օսմ. Պանկային դիւանք
Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԿԵԱՆՔ , ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ , ԱՐԿԱԾՔ

1898 ասորոյ մէջ գանձուած ապահովագրիւններ	31.775 642 Ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121 765 333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած	164.172 000 »

Կեդրոնացեալի , Ղալաթիոյ ֆարափին վրայ , Մախսուսն հին տեղը
Ընդհ. Գործակալ
Ա. ՀԻՐՄԻՒԷ

ԹԷՄՏՈՐ ՌԷԲԷԼՆ

ՄԱՍԻՍ

50րդ ՏԱՐԻ


— 6 ՅՈՒՆՈՒԱՐ 1901 —

ԹԻՒ 1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր Շրջան (Խմբագրական Ցայտարարութիւն)։ — Մատթեոս Մամուրեանի մահը. Տ. Ա. — Փօստայ (Նորավեպ) Գ. ԶՉՐԱԳ. Առաջարկ մը ՅՈՎ. Զ. ԳՈՋԱՆՃԵԱՆ — Աջքերը (Բանաստեղծութիւն) Մ. ԱՃԷՄԵԱՆ. — Քաղաքական աշխարհ Նոր գործն ռեո ծնած նոր ազգը. Մ. ՆԱԹԱՆԵԱՆ. — Յուշանորս:

ՆՈՐ ԾՐՋԱՆ



Այս եօրնեակին սկիզբը, 1901 յունուար 1ին, Մասիս՝ իբրև լրագիր՝ իր հրատարակութեան յիսուներորդ տարին թեւակոխեց, եւ իբրև գրական շարք սերտ՝ իր արդի ձեւով ու խմբագրութեամբ՝ կը թեւակոխէ երկրորդ տարեշրջանը։ Կը պախնէ որ, 1900ի շրջանին մէջ, պատահական ընդհատումի մը հետեւանալով, փոխանակ 52 թիւի՝ 40 թիւ միայն կըրցանէ հրատարակել, որով սակայն կը կազմեն 460 էջէ բաղկացած հատոր մը, որ պիտի կրնայ արժանաւոր անկիւն մը գրաւել հայ մատենագրաւորներուն մէջ, բովանդակելով Պոլսեցի ու գաւառացի ծանօթ գրաչեցներու, բանաստեղծներու, բանասերներու գրչին լուսագոյն արտագրութիւնները։ Ասով հաւորեմ, զրկան մը ըրած չլլալու համար մեր բաժանորդներուն, մտադրած ենք ներկայ շրջանին մէջ այդ 12 թերթերուն պակասը լրացնել՝ քանի մը յատուածաձևան պրակներով ստուարացնելով Մասիսի ծաւալը, այսինքն 16ի սեղ՝ երբեմն երբեմն 32 էջէ բաղկացնելով զայն յառաջիկային, երբ մեր նիւթական միջոցները ներեն, ինչպէս կը յուսանք։ Այս կարգադրութիւնը չենք կարծեր որ գանգատի տեղի բողու։ Մնաց որ, թէ՛ տեղական եւ թէ՛ գաւառային բաժանորդագրութեանց գնոյն վրայ կարելորդ գեղջ մըն ալ ըրած ենք, ինչպէս ծանուցած ենք՝ թերթիս ուրիշ մեկ մասին մէջ, առանձին յայտարարութեամբ։

Թէ իր արդի ձեւին մէջ Մասիսը ո՛ր աստիճան օգտակարութիւն ու շահեկանութիւն ունեցաւ հանրութեան համար, այս մասին մեզի չիյնար բան մը ըսել. իրական կերպով արտայայտող գնահատում մը, — ընթերցողներու յարանուն թիւի մը ապահովութիւնը, — աստիճանացոյցն է լրագրի մը ընծայած օգտակարութեան ու շահեկանութեան, եւ եռամսեայ ընդհատումի մը պատճառով նիւթական վնասներուն հակառակ, նոր եռանդով մը այս նոր շրջանը սկսելիս ինքնին կ'ապացուցանէ թէ 1900 տարեշրջանին մէջ այդ գնահատումը պակասած չէ Մասիսին նկատմամբ։ Եւ ասիկա կը պարտինք մեր կարող աշխատակիցներուն որով չի մեծելով Խմբագրութեանս հրաւերը, հանոյք մը սեպեցին իրենց համար՝ համախմբուիլ այս գրական դարաստանին շուրջը, իւրաքանչիւրը նուիրելով անոր իր գրչին լուսագոյն արտագրութիւններէն մաս մը, արձակ կամ ոտանաւոր, — տնօրէններ օրուան հարցերու վրայ, մատենախօսական յօդուածներ, նորավեպ, արանյալեպ, բժրական ու գիտական հոօնիկներ, բանասիրական ստուումասիրութիւններ, ուղեւորական

ճօրեր , ու րնօր բարգմանութիւններ : Հրապարակային անկեղծ շնորհակալութիւն մը յայնչելով ամենուն ալ , վստահաբար կրնանք յուսալ , ինչպէս անոնց մեծագոյն մասին խոսուած անձ եմ արդէն , քէ իրենց պատուաբեր ու բանկազին աշխատակցութիւնը պիտի շարունակեն նուիրել Մասիսին՝

Սիպիլ , Գ. Զօհրայ , Աղեֆ . Փանոսեան , Մերսեսկու , Մ. Անեմեան , Արս. Յարութիւնեան , Նիլիէ եպիսկ . Գուրեան , Թլկասիւնցիին , Մուշեղ վարդապետ , Ռ. Որբերեան , Յովն. Գազանեան , Վահան Մալեգեան , Ռուբէն Զարդարեան , Տոբ. Վահրամ Թորգոմեան , Տոբ. Ն. Մասիս , Տոբ. Յովսէփ Տեր-Ստեփանեան , Կ. Ոսկեան , Աս. Բարբուրեան , Գիւմեան , Արմինէ , ինչպէս նաեւ ուրիշ ոչ նուազ ծանօթ գրողներ որոնք կամ անգամ մը երեւցան նախորդ ժրջանի մէջ կամ առաջին անգամ ըլլալով պիտի երեւան ներկայ ժրջանին մէջ : Այս առթիւ աւելորդ չենք սեպեր յայտարարել , քէ գիտական գրուածքներու , — ժողովրդական լեզուով , — աւելի լայն տեղ մը պիտի սանք այսուհետեւ :

Շնորհակալութեան պատճ մը ունինք նաեւ մեր գաւառային յարգելի գործակալներուն որոնք այնքան ազնուաբար ստանձնեցին մեր շաբաթաբերքին ծաւալման հոգը՝ իրենց միջավայրերուն մէջ , ու սասարեչին անոր յաջողութեանը : Կը յուսանք որ այս նոր ժրջանին մէջ ալ չպիտի զլանան իրենց բարեացակամ աջակցութիւնը :

ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ ՄԱՅԸ

Տխուր զուգահիշուածեամբ մը , 1900 յունուար 8ի Մասիսին մէջ՝ Մամուրեանին երիտասարդութեան պատկերը կը հրատարակէինք , իրր հրապարակագիր եւ իրր գրագէտ անոր կատարած դերը ուսումնասիրող յօդուածով մը : Այսօր , ճիշդ տարի մը ետքը , միեւնոյն շարժումն թիւին մէջ , Մամուրեանին մահուան գոյժը արձանագրելու եւ այս կարուստին առջեւ մեր զգացած ցուր յայտնելու հարկին մէջ կը գտնուինք , ցաւ մը որ որքան անկեղծ՝ նոյնքան ալ խորունկ է , հայ քրտութեան ու գրականութեան համար Իգմիրի ալեւոր նահապետին մահուան թողած պարտալին համեմատութեամբ : Վասն զի , Մամուրեան խորագիր մը չէր բառին այն խորթ առումովը զոր դժբաղդարար կու տան անոր գրչի հասարակ գործաւորներ , ո՛չ ալ գրագէտ մըն էր՝ կեղծուպատիր արտագրութիւններով ու խոսափուկ համբաւով մը տիրացած այդ տիրադոսին : Ամէն բանէ առաջ գաղափարի ու սկզբունքի մարդ , իր կէս դարու մտաւորական գործունէութեան միջոցին

չգոհեց զանոնք ընաւ ո՛ր եւ է նկատուած , — եւ ի՞նչ հարկ քաջուիլ ըսելէ , — ո՛ր եւ է շահու , ու իր երիտասարդութեան առոյգ օրերէն մինչեւ ալեղարդ հասակը , երբ ա՛լ գրիչը կը դողդղար մատներուն մէջ , մնաց հաւատարիմ իր իտէալներուն , իր դաւանանքին , իր ուղղութեանը : Յետոյ , իր հմտութիւնը , իր յամառ աշխատողի ձիրքը , իր յարատեւութեան ոգին լիովին արժանի հանգիստացուցած էին զինքը այն ընդհանուր մեծարանքին ու համակրանքին՝ որ Ազգին ամէն գասակարգերուն կողմէ այնքան սրտեւանդն ու փայլուն կերպով արտայայտուեցաւ իր յիմնամեայ յարեւեանին առթիւ , 1899 հոկտեմբեր 17ին :

Պոլսոյ հայ օրագրողներու մտքին , ու մանաւանդ սրտին մէջ , զեւ երէկուան պէս թարմ է յիշատակը այդ օրերուն երբ ամէն մէկս , ինքնարեւր զգացումէ մը մղուած , մեր մասնակցութեան բաժինը ունենալ կը փութայինք այդ մտաւորական տօնին որ պիտի նուիրագործէր Դաստիարակին , Գրագէտին ու Հրապարակագրին կէս դարու մաքուր ու

արդիւնաշատ գործունէութիւնը : Ու համարու-
թեան համար ալ մտցուած չէ այն տենդոտ
ոգեւորութիւնը որ առաջ եկաւ՝ ինչպէս Իլ-
միրի նոյնպէս Պոլսոյ ազգայիններուն մէջ,
գաւառները, գիւղերը, օտար երկիրներու
հայ գաղութներուն մէջ :

Մամուրեան երջանիկ մահ մը կուեննայ,
— եթէ երբէք մարդս ո՛ր եւ է տարիքի մէջ
կեանքէն բաժնուելուն կրնայ չցաւիլ ու
չսարսալ, — ինքզինքը բարոյապէս վար-
ձատրուած, գնահատուած տեսնելով իր վեր-
ջալոյսին մօտ, ինչ որ անդորր ու խաղաղիկ
կերպով հանգչեցուց իր ծերունիի յոգնած
գլուխը օրհասի բարձին վրայ : Ու միտքար-
ուած կը թողու աշխարհը, իր սնարին մօտ
տեսնելով իր երիտասարդ ու եռանդուն որ-
դին, Հրանտ Մամուրեան, որ արդէն իսկ
ընդգրկած է իր տաղանդաւոր հօրը ասպա-
րէզը :

* * *

Մամուրեանի մահուան գոյժին հասնելուն
յաջորդ օրը գրուած այս տողերուն մէջ, ո՛-
րոնք ցաւի ու յարգանքի արտայայտութեան
մը սահմանին մէջ կ'անփոփոխին արագապէս,
կենսագրական նօթերու եւ թուականներու
շարք մը շարելու պէտք չենք տեսներ, ո՛չ
ալ ողբացեալ գրագէտին հեղինակութեանց
ու թարգմանութեանց հատորներուն երկար
ցանկը դնելու, որոնք դեռ տարի մը առաջ
ազգ. բոլոր թերթներուն մէջ հրատարակուած,
ծանօթ են ամէն գրասէր ընթերցողի : Բայց
կ'արժէ պահ մը կանգ առնել Մամուրեանի
Հանդէսին առջեւ, որուն համար կը գրէր
«Արգաս» իր ծանօթ ուսումնասիրութեանը
մէջ (*) «Արեւելեան Մամուրը, որ Հայոց Ռը-
վիւ sk sko Մօնէք եղած է ատեն մը, կա-
րեւոր տեղ մը բռնած է քսան տարուան
մօտ միջոց մը մեր հանրային կեանքին մէջ,
Մառայութիւնը զոր Մամուրեան մատու-
ցած է այս պարբերականով, միշտ պիտի
գնահատուի անոնց կողմէ որոնք անոր ստուար

հատորները աչքէ անցընելու հոգը պիտի
ստանձնեն : Այդ հատորները մեր աչքին առ-
ջեւ են այս ասիւրը գրած ատեննիս, եւ բե-
զուն ուսումնասիրութիւններով, նիւթերու
գնահատելի ընտրութիւնով անցուած ամբողջ
տարիներ կը գտնենք, որոնք պատուարեր
պիտի ըլլային Փրանսական կամ անգլիական
ո՛ր եւ է Հանդէսի համար ալ » :

Եւ արդարեւ, բուն իսկ Արեւ. Մամուրչին
մէջն է որ երեւան եկաւ Մամուրեանին տա-
ղանդը, բազմակողմանի նիւթերու, զանազան
ճիւղերու վրայ գրելու եւ ամէնուն մէջ ալ
յաջողելու կարողութիւնը : Վէպը՝ ազգային
տեսութեան մը պէս մատչելի եղաւ իր գրու-
չին, մինչ միեւնոյն ատեն փիլիսոփայական
ու ընկերային հարցերու վրայ կը գրէր նոյն-
քան ձեռնհասօրէն, Շահնուրի սրամիտ թրդ-
թակցութիւններովն ալ միշտ վառ պահելով
ընթերցողներուն ուշադրութիւնը : Քննադա-
դող մը ու վիճարանող մը իր լրագրագետի
գրեթէ բովանդակ կեանքին մէջ, Մամուր-
եան ընդգիծախօսներ ու հակառակորդներ ու-
նեցաւ իր դէմ՝ առանց սակայն բնաւ տեղի
տալու, ու մինչեւ վերջը անխախտ մնալով
իր համոզումներուն վրայ :

Իրեւ դաստիարակ, ոչ նուազ կարեւոր
եղած է իր դերը, Իգլիլի մէջ, ուր սերունդ-
ներ կրթած է, այստեղ Ազգ. Պատրիարքա-
րանի մէջ պահ մը վարելէ վերջ դիւանագետի
փափուկ պաշտօնը խղճմտօրէն ու վերանորո-
գիչ ձեռքով մը :

Մամուրեանին մահուան տպաւորութիւնը,
մեր բոլոր գրչի աշխատատեղներուն, դաս-
տիարակներուն, օրագրողներուն համար,
տպաւորութիւնն է ընտանիքի մը պատկա-
սելի պետին անհետացման, որուն ներկայու-
թիւնը միշտ սիրելի ու յարգելի եղած է ա-
մէնուն : որ բնաւ երբեք դադրած չէ գործելէ
եւ որուն մահէն ետքը՝ գուրգուրանքի պարզ
խշատակ մը չէ միայն որ կը մնայ իրենց, այլ
հետեւելի շաւղի մը ու մէկէ աւելի օրինակելի
դասերու շարք մը :

S. Ա.

(*) ՄԱՍԻՍ, 1900 յունուար 8, թիւ 2 :

Փ Օ Ս Ս Ա Լ

(ՆՈՐԱՎԵՊ)

Ա

Հաճի Տիւրիկը, սպասուհիներու միջնորդը, տասնհինգ օր աշխատելէն վերջը միայն յաջողեցաւ ձեռք ձգել կեսարացի Ղազար Էֆէնտիի կնոջ, Սուրբիկ հանրմին, Գատըղիզի ամենէն հարուստ տիկիններէն մէկուն, ուզած սպասուհին:

Հաճին, Պարտիզապի մը, ինքն ալ սպասուհի, սոնտու, լուացարար, խոհարար կին եղած էր ատենով, պարագային համեմատ: Ծառայութեան ամէն ատարձաններէն անցեր էր մէկիկ մէկիկ, Պոլսոյ հայ տուներուն, անոնց կարծեցեալ պարկեշտութիւններուն մէջէն՝ հասնելով իր հիմակուան անկախ գիրքին:

Այդ տուներուն բոլորին մէջ, Հաճի Տիւրիկ, որ ան ատեն դեռ Երուսաղէմ գացած չլլալուն համար՝ հաճի շէր, իրեւ ճշմարիտ ու կատարեալ ազատին, աղաներէն մինչեւ սպասուորները բոլորը ճանչցեր էր մտէն, երբոր մեծ ու պզտիկ, գրեթէ տասնց բացառութեան, քիչ շատ գինքը սղմեր սղերակեր էին, հոս հոն, սենեակներուն մէջ, հանրմները տունը չեղած միջոցին, սանդուխին զլուրը, դռներուն ետին, երբեմն խոհանոցներուն անկիւնները: Եստ մը տուներու մէջ իր տիրուհիներուն նախանձը շարժելու շափ ընդունելութիւն գտած էր էրիկ մարդերէն, ու վռնտուեր էր առանց գանգատելու:

Եստ բան տեսած էր իր անձին վրայ եւ աւելի շատ իրեն շարժը, իր բարակի հետաքրքիր քիթովը հոտուքտալով ամէն սպակա նութիւնները եւ սուր ականջովը՝ տուներուն ետեւէն ունկնդրելով կամացուի մը ըստած խօսքերուն:

Երբուն կնիկ մըն էր արդէն, երբոր առած պախիշիչներէն եւ ամսականէն աւելցուցած ստակովը Երուսաղէմ գնաց, ով գիտէ ուխտի թէ մեղքերուն թողութիւն ուզելու համար:

Վերադարձին՝ Հաճի Տիւրիկ, սպասուորութիւնը թողաց, ինքնիր զլլաուն գործի սկստաւ, ծանօթ տուներու համար կին ծառաներ գտնելու ձեռք զարկաւ, թէլլալ կնիկ եղաւ: Իսկոյն յաջողեցաւ այս գործին մէջ պատրաստարան ու զուարճախօս կին էր: Էֆէնտիներուն՝ վրան բաց կատակներ կընէր, հանրմներուն՝ օրուան գայթակղութիւնները կը բերէր: Ամենքը գոհ էին իրմէ. ամէն բանի յարմար սպասուհին ինքը միայն ճարել գիտէր: Իր տեղաօրոճ ծառաները տարիներով կը կենային զանուած տեղերին: Մենծ տուները, հարուստի տուները, իրեն կը զիմէին, բոլորն ալ իր յաճախորդներն էին, իր անունովը կը պարծենային:

— Մեր թէլլալը Հաճի Տիւրիկն է:

— Մերն ալ:

Հաճին՝ Սրիկըլին կամ Պիւսկիլին պէս բան մը կըլլար հայ հանրմներուն համար:

Ասոր համար էր անչուշտ որ Սուրբիկ հոնրմ իրեն լուր իրկեց երբոր իր ասոր մէջ հինօրուան Մարիամին քով նոր սպասուհի մը աւելցնելու որոշում տուաւ ու անոր ճշդեց այն յատկութիւնները որ նոր գալիս ազատիւնէն կը պահանջուէին:

— Ընտրիկ մէկը ըլլալու է ամէն բանէ առաջ. հո՛գ չէ թէ որ սկիզբը ձեռքէն գործ չի գայ. հոս շուտով խօսեքը կը սորվի. արդէն մեծ բան մըն ալ չունի ընելիք, աղուս Օննիկին սենեակը պիտի չտիէ, զգեստները մաքրի, սա ալ բոսմ որ աղջիկ գաւակ չեմ ուզեր տանս մէջ:

Եւ վախնալով որ գալիք սպասուհին Օննիկին սենեակը չտիելու, զգեստները մաքրելու սահմաններովը՝ պէտք եղածէն աւելի բացայտ կերպով իր գիտաւորութիւնը հասկըցուցած կըլար, իսկոյն աւելցուցած էր.

— Աչքը երեսը բաց մէկը չեմ ուզեր հա՛, հաճի՛, դուն իմ ուզածս հասկցար, թէ որ զիս

գոհ ընեն . ուզած թէլլալէքդ եւերօքը կուտամ :

— Հասկցայ , օղորդ :

Միջնորդք քիչէն շատ հասկցող կին էր . անմիջապէս չորս դին ինկաւ . հարցուց փրկուսեց , բայց գտնուածները Սուրբիկ հանրմին ուզած պայմանները լիովին չէին միացներ իրենց վրայ : Գեղեցիկ աղախիններ չէին պակսեր իր ձեռքին տակ , բայց ասոնց աչքերնին ալ երեսնին ալ պէտք եղածէն աւելի բաց ուած կին ու Սուրբիկ հանրմին ծեր էրիկը Ղազար աղան գլխէ հանելու չափ սատանայ էին : Հանրմին ուզածը միամիտ աղջիկ մըն էր եւ ասիկայ Պղտոյ մէջ զիւրին չեղաւ գտնել :

Այն ատեն Հաճի Տիւրիկ յատուկ ճամբորդութիւն քրաւ . Իզմիտ , Պաղչէճիկ , Արուանպէկ , Ատարազար : Վերջապէս պտտեցաւ բոլոր այն գեղ աեղուանքը որոնք սպասուհիներու արտածումը կրնեն . եւ ահա մեծ յոգնութենէ վերջը , շրեքշարթի օր մը ցորե կին , յաղթական մուտքով մը , Սուրբիկ հանրմին ներկայացուց իր գեղէն բերած սպասուհին , հազիւ տասնութ տարեկան կին մը . զոր նոյն օրն իսկ մրասին առեր բերեր էր Պաղչէճիկէն :

Սուրբիկ հանրմ գլխէն մինչեւ ոտքը զրննեց նորեկը որ զբան մօտ բարեւ ընծաւ կեցեր էր . իր հոգած պասմայի տմեւ չիջազգեստին հակառակ՝ իրօք խիստ շնորհալի գտաւ զայն , բանի որ չուտով ամուսկանին վրայ յարմարեցաւ միջնորդին հետ . եօթը մէծիտ ասիւրը եւ տարին երկու ձեռք նոր լաթ , բայց իր մէկդի նեաածներէն զոր իր յօժարութեան համեմատ պիտի նուիրէր , եթէ գոհ մնար անոր խրգվեթէն : Եւ անմիջապէս սկըսելու համար կոկիկ ու մաքուր շրջագգեստ մը հագցուց անոր , ձերմակ գոգնոց մը կապեց , գլխէն եագման հանեց եւ մազերը շտկել տուաւ . այն համառօտ արդուզարդով ազախներ իր գեղեցկութեան բոլոր շքեղութեանը մէջ երեւաց : Մէջքը բարակ չէր , բայց հասակին բարձրութեան եւ բարձրուն հարստութեան վայրած էր : Զուածեւ ու , գեղացի բլլալուն հակառակ , դեռ ծեր միտտիկ դէմքին վրայ սեւ խոշոր աչքերը

սովորաբար թարթիչներուն չուքին մէջ կը պահուէին ու երբեմն միայն ընքուխներուն աղեղին տակ կը խորտոտային : Բերանը՝ իր զնայելի գիծերովը ու երկու դիւ անկունէն իրրեւ թէ յատկապէս վեր տոնուած , անդիմադրելի պջրանք մըն էր ինքնին եւ մտցնել կուտար արկունքին անարիւնութիւնը :

Ոչ ոք կիներուն չափ գեղեցկութեան ճաշակը ու հասկացողութիւնը ունի . գեղեցկութիւնը այն միակ ճշմարտութիւնն է զոր կինը չի կրնար ուրանալ , նոյն իսկ երբ իր թշնամիին վրայ կը գտնուի . շատ հեղ ըած եւ արամբի կնոջ մը վրայ պատմուած չարախօսութիւններու , լսամբասանքին , իրաւ կամ սուտ ամէն կերպ աղտոեղութեանց էն տաք վայրկեանին՝ սա յայանութիւնը որուն խորին անկեղծութիւնը կը զարմացնէ գեղեց եւ պատմողին արդարատէր մէկը բլլալուն համոզում գայացնել կուտայ .

— Ատոնք բոլորը իրաւ են , բայց չուն կնիկը աղտոր է :

Սուրբիկ հանրմ հաւնեցաւ ուրեմն իր սպասուհին , ապապրեց որ վրան գլուխը մաքուր պահէ , աշխատութիւնը սահմանեց , վարքի բարքի խրատներ տուաւ :

Յետոյ , իմանալով որ հօրմէ մօրմէ որք ու նոր ամուսնացած էր Տիգրանուէին , Սուրբիկ հանրմ որ Հիւանդանոցի խնամակալուէի էր ու իր ամուսնոյն պէս որբատէր ու աստուածավախ կնոջ համբար կը վայելէր , իր սովորական մեծ ախօսութիւններէն քիչ մը ջարդեց :

— Ես ծառաներս զաւկի պէս կը նայիմ . ուրիշ տուներու մէջ անոնց հօրի ջուր կը խոնցեն , դուն աղէկը գիտես , Հաճի՛ , ես աղբիւրի ջուր կուտամ անոնց . խոհանոցին մէջ երբոր կերակուրները շօգտեն ձեզի , ինձի անպատճառ իմաց տուր . խոհարարը ծառաները զրկելու կելլայ , ատանկ բան չեմ սիրեր ես . սա ալ ըսեմ որ կերակուրդ ուտելուդ պէս խոհանոցին մէջ կենալու չես . էրիկ մարդ ծառաներուն հետ պէտք չէ որ խօսքի բռնուիս . հասկցա՞ր աղջիկս , հիմայ գնա՛ , թող Մարիամը գործդ ցուցնէ քեզի :

Մեզը ու կաթ կը վապէր բերնէն . Տիգրանուէին կատարեալ երանութեան մը մէջ զգաց ինքզինքը :

Բ.

Հետեւեալ առտուն կանուխ Տիգրանուհին արթնցաւ : Պատուհանէն եկող արեւը ճիշդ իր անկողնին վրայ կ'իյնար , կը սփռուէր , իր հոլանի պարանոցին ու թեւերուն սպիտակու թեան վրայ կը ճառագայթէր , բոլոր սենեակին մէջ ուրախութիւն մը կը բերէր : Երկու օրէ ի վեր իր կեանքին մէջ պատահած փոփոխութիւններուն տակ ընդարմացած կը մնար՝ անկողնին մէջ նստած , մտքովը ատոնց քաղուածքը կ'ընէր :

Իեղը, մօրաքոյր մը տանը մէջ ապրած էր ինքզինքը գիտնալէն ի վեր մինչեւ ամուսնացած օրը : Մօրը յիշատակը իր պզտիկ տարիքին մէջ շատ տարտամ կերպով մը կու գար մտքին առջեւ , ատեն անցնելով գոյնը նետած , գիծերը եղծուած հին լուսանկարի մը պէս : Հայրը բնաւ ճանչցած չէր : Այս մօրաքոյր տանը մէջ՝ կէս աղախիճի ու կէս ազգականի պէս կ'ապրէր , տատելով , ինչպէս կ'ըսէր ինքը , իր ապրուստին բեռը զլայի չի դարձընելու նպատակով : Ու երջանիկ պիտի ըլլար հոգ ապրելուն , եթէ մօրաքոյրը երկու աղջիկները անտանելի չի դարձնէին իր կեանքը : Ի՞րն էր յանցանքը՝ եթէ անոնցմէ աղուոր էր ինքը : Ապաքէն , այս ազուրուսթիւնը իր թշնամին եղած էր եւ անկեղծութեամբ Տիգրանուհին կը զզլար իր գեղեցկութեանը համար :

Իեղին մէջ շատ մը տղաքներ իր ետեւէն ինկած էին գիշեր ցորեկ , հասակին շքեղութեանը , մինչեւ կունակը հասնող դեղին մազերուն գովեստը փսփոտալով ականջն ի վար : Ասոնց եւ ոչ մեկուն հաւատացած էր . բայց այս հետապնդումները՝ հանդարտ ջուրի մը մէջ նետուած մանր քարերու պէս , իր հանգիստը վրդովեցր էին : Մօրաքոյրը աղջիկները իր վրայ ամէն տեսակ չարախօսութիւններ տարածելու մէջ ստաջիւններն էին : Ահա այդ միջոցին էր որ երկտասարդ բանուոր մը , իր օրական ապրուստը ճարելու հազիւ հազ կարող մէկը , զինքը ամուսնութեան ուզելու ելեր էր : Տիգրանուհին տասնութը տարու էր հիմայ . ինչ որ գեղ տեղերու մէջ , աղջիկներուն համար՝ շատ առաջ գացած տարիք մըն է . յետոյ , իր մօրաքոյր տունէն ելելու ստուգու-

թիւնը կար . մօրաքոյրն ալ զինքը ճամբելու փափաքին մէջ սիրով բնուներ էր այս առաջարկութիւնը : Եւ օրին մէկը հարս գացեր էր տան մը մէջ , ուր փեսէն զատ անոր ծնողքը կային : Մեծ բան մը չի հասկցաւ այս ամուսնութենէն . կարգուենուն ութ օր վերջը էրիկը լեւ գնաց իր գործին , ածուխ շինելու , ու ամիս մը վերջը օր մը միայն դարձաւ կնոջը քով , հետեւեալ օրը նորէն իր լեւը երթալու , աներեւութանալու համար : Հարսը հոս ալ կ'աշխատէր օրն ի բուն ու իր կեանքը , բեւեռային օրերուն պէս , երկարատեւ խաւարի մը կը նմանէր զոր եւ ոչ մէկ լուսոյ ճառագայթ մը կու գայ վայրիկեան մը գէթ լուսաւորել , ուրախացնել :

Յանկարծ օրին մէկին ալ իր էրիկը տուն բերին սաքը կտարած , ամիսներով անգործութեան դատապարտուած . ասիկայ լուսմը եղաւ : Ա՛հ , թէ որ գոնէ զաւակ մը բերած ըլլար , հիմայ ստնտուութեան կ'երթար Պոլիս , ստակ կը վստակէր ու տուն մըն ալ կըրնար գնել . բայց այդ ալ չկար ու ասիկայ՝ իր կեսուրբ ու կեսրայրը յանցանքի մը պէս կը վարնէին իր երեսին :

Հաճի Տիւրիկ ճիշդ այդ ժամին հասաւ զինքը միասին Պոլիս տանելու համար : Էրիկն ալ , մօրաքոյրն ալ , որ մօր տեղ կ'անցնէր , յօծարեր էին ասոր . Տիգրանուհին տգատագրութեան պէս բան մը կը տեսնէր հոգ , թեւ լայլ՝ անոր ապագայ հանրմին փառարանութիւնը բերնէն չէր ձգեր : Հարուստ մարդիկ , վերկիլի հանրմ , Կաղանդին , Մնունդին , Չատկին պաղշիշ , կերուխումը առատ , աշխատութիւնը թեթեւ . սպասուհւոյ մը համար ասկէ աւելի ցանկալի տեղ չէր կրնար ըլլալ :

— Աղջի՛ , օղո՛ւղ , չի գտնուած տուն է , կ'ըսէր Հաճի Տիւրիկ :

Այնքան որ մօրաքոյրը պահ մը կը մտածէր իր աղջիկներէն մէկը զրկել Տիգրանուհիին տեղը : Վերջապէս , որոշումը տուեր էին եւ հետեւեալ առտուն դեռ չի լուսցած , գիշերուան մութուն մէջ կատքը երկու կիները Պողչէճիկէն իջեցուցեր . ծովեզերքը բերեր ձգեր էր , ճիշդ կրո արշաւոյսը կը ծագէր :

Տիգրանուհին հիմայ , այս մութէն ղէպ ի լոյսը ուղեորութիւնը , ժամանումը միտքը

կր բերէր , բարի գուշակ մը կը համարէր իր կեանքին համար : Իսկոյն զմայլեր էր Բզմիտի ծովածոցին վրայ , որ այգուն սրակած դեղին սակիի ցոլացումին մէջ , անչարժ կը տարածուէր , կանուխ արթննալ չուզող աղւոր ու ծուլ կնկան մը պէս : Մինչեւ այդ տարիքը մօտանց չէր տեսեր ծովը ու այս պահուս , գեղին եռաթի խոշոր նաւակին մէջ տեղաւորուած , իր պզտիկ պողչան քովիկը , այդ կապոյտ տարածութեան վրայ սահելուն կը գրօնուր ու անոր վրայ պատմուած ահաւոր պատմութիւններուն չէր հաւատար : Բզմիտ հասնելուն՝ հաղիւ ատեն ունեցեր էին շոգեկառքը մտնել եւ իսկոյն կայարանին աղմուկէն ու դո՛ս ու բո՛հէն զատուելով խօլ արշաւ մը սկսեր էր . անգուլ , անդադար , ժամերով վազք մը , քերելով ծովեզերքը ձախէն , ու աջէն՝ սուրալով մութ մանիչակագոյն հողերու մէջէն որ մինչեւ շէրէքէ այդ տեղի ցամաքը կը կազմեն : Հոս հոն , տեղ տեղ , կը կենային ու Տիգրանուհին կը կայծէր որ յոգնութիւն առնելու համար էր ասիկայ . ումանք կը ձգէին շոգեկառքը , տանք նոր կը մտնէին , եւ անմիջապէս ճամբայ կ'իյնային , յիւարական խոյացումը կը սկսէր դէպ ի Պոլիս : Ու կը յիշէր վերջապէս հասնելին Հայտարարաշա , Պուլսը , Բերան գորս Հաճի Տիւրիկ մտտով իրեն ցուցուց հետուէն եւ սողին՝ Գառզեղ իրենց գալիք տեղը . մաքուր փողոցներով , գեղեցիկ տուներով շինուած քաղաք որուն վրայ հիացաւ : Կայարանին մէջ կը վախնար որ բազմութեան մէջ չի կորսուի . թեւին տակի պրտիկ պողրան ուժով մը կը սեղմէր իր շիւթութեանը մէջ մտնալու վախով : Հաճի Տիւրիկը քովն էր սակայն , ճարպիկ ու վարպետ առաջնորդ , որ ամէն դժուարութեանց մէջ կը քաշէր կը հանէր զինքը , մինչեւ որ հոս այս հարուստ տանը մէջ բերաւ ու յանձնեց զինքը : Հաճի Տիւրիկ , պահապան ու զօրաւոր հրեշտակի մը մարմնացումն էր իր աչքին ու Տիգրանուհին իր սրտին խորէն շնորհակալ կ'ըլլար անոր այս վայրկեանիս :

Եւ այս տունը՝ իր հարուստի բարբառող կահաւորումին մէջ . երեք ծառայ՝ որոնք իրենց աշխատութեան մեքենական ճշգրտութեամբ զարմացուցեր էին զինքը . ծեր

Մարիամը , որ ինչ րնեղիքը պիտի սորվեցնէր հոստեղ . եւ մանուաւնդ անուշ լեզու հանրմ մը : Միայն , իրիկունը աղային լուրջ ու խոժու դէմքէն վախցաւ քիչ մը . յետոյ անոր տղան՝ երիտասարդ մը , մարմնեղ , արիւնոտ անձ մը , հօրը ձեւը , հօրը լրջութիւնը :

Այս ամէնը կարգաւ ամփոփեց չարեց մըտքին մէջ ու խորունկ գոհունակութիւն մը զգաց . յետոյ , ցատկեց տեղէն շուտով մը . հագուեցաւ , մազերը սանտրեց . պատէն կախուած հայելիի մեծկակ կտորի մը մէջ նայեցաւ . այն ատեն , առջի անգամ ըլլալով . ու շաղրութեամբ դիտեց իր դէմքը , աղւոր ըլլալուն հաճոյքը զգաց ու վար իջաւ :



Սուրբիկ հանրմին աղւոր պէտքիսն ամէնուն բերանն էր գեղին մէջ : Ազաններն ալ հանրմներն ալ Սուրբիկ հանրմը կը շնորհաւորէին :

Պզտիկ ու անգիտակից պջրանքով կը հագուէր անիկայ , իր հանրմին պատուէրին համեմատ , ճերմակ մաքուր գոգնոց կապած առջին : Իրիկունները , աշխատութիւնը լմնալէն ետքը էն վերի յարկը իր փոքրիկ սենեակը կերթար , պատուհանին առջեւ կը նստէր , շոգենաէն ելողները դիտելու համար , մինչեւ որ վարէն կանչէին զինքը :

Տանը մէջ կը սկսէր վարժուիլ . իր առած ամուսկանը ամողջութեամբ գեղ կը խրկէր , էրկանը ձեռքը , ու գո՛հ էր հոս այս կեանքէն : Միայն երբեմն խուլ անհանգստութիւնը ունէր վտանգի մը զոր չէր տեսներ , ճիշդ , ինչպէս սենեակի մը մէջ ինքնիրեն նստած մէկը , նոյն իսկ աչքը գոց պահուն , կը զգայ ուրիշի մը ներկայութիւնը , աչքը դեռ չի բացած :

Այս վտանգը աւելի օդին մէջն էր քան թէ չօշափելի բան մը : Ձէր գիտեր հաստատ կերպով թէ ի՞նչ էր իրեն սպառնացող բանը . բայց զգոյշ կենալու պէտքը կը զգար :

Այս Պուլսի մարդիկը , իրենց բոլոր քաղաքավար վարմունքին՝ հակառակ , կնկան նայելու ձեւեր մը ունէին , որ համարելու պէս կը դպչէր իր երեսին եւ իր նոր հարսի , գրեթէ կոյսի ամէկտուութիւնը կը վիրաւորէր ամէն վայրկեան : Միմիայն իր կնոջական

ընազդովը կը զգար լուս իղձերու հովը որ իր շուրջը կեղէր, կը բարձրանար, երբոր էրիկ մարդոց առջեւ գտնուէր, անոյ բերած կամ ջուր տուած միջոցին: Եւ, դէպ ի դուս դարձած, սենեակէն դուրս ելլելուն՝ ամէն աչքերը իր վրայ էին, իր յաղթ ու գեղեցկաշէն մարմնին վրայ որուն մաքուր ու լեցուն գիծերը, իր քալուած քին հետ հագլու թէ նշմարելի շարժումով մը կը խաղային: Մինչեւ անգամ իր հագուստը ու կապուստը, շինականի եւ սպասուհիի պարզութեամբը, եւ թերեւս ատոր համար, հրապուրիչ բան մը ունէր:

Այս ձգողութեան՝ Ղազար աղային տղան չի դիմացաւ երկար ատեն:

Մարմնեղ ու տարփասէր երիտասարդ մըն էր, հորը պէս իր բոլոր իղձերը թաքուն պահելու սորված ու, ատոր համար, ա՛լ աւելի ինքզինքը զսպելու անկարող, երբոր զիպուածով մինակ մնար սպասուհիին հետ:

Իր ծանր գլուխ տղու համբաւին հակառակ, շուտով սկսաւ կատակներ բնել Տիգրանուհիին հետ, փորձի ենթարկելով անիկայ, ջանալով հասկնալ դիմացինին ընդդիմութեան ոյժը: Երբեմն իրրեւ թէ անզուշտութեամբ, անոր մարմնին կը դպէր, ձեռքը բռնել կուզէր: Այն ատեն, Տիգրանուհին հասկցաւ անոր միտքը ու ետ քաշուեցաւ, առանց խուճապի, այն վախկոտներուն պէս որոնք ծանր ծանր քաշելով կը նսահանջեն, շինծու քաջութեամբ եւ անտրտութեամբ մը ծածկելով իրենց ներսիցիի ոյժը: զիմացինին յարձակումը չի փութացնելու նպատակով:

Անկէ վերջը երիտասարդը բացէ ի բաց իր պահանջումները սարգեց անոր, այնքան աւելի բռնանալով, որքան վեց ամիսէ ի վեր տեւող մերժումները զինքը ամէն ծայրայեղութեանց տանելու աստիճանին հասցուցեր էին: Անտու, իրիկուն, գիշեր, աչք կապուկի, կամ պահուրտութի պէս բան մըն էր տանը մէջ, սենեակէ սենեակ, անկիւնէ անկիւն հալածանք մը, որուն մէջ աղախներ, պարտաւորուած անոր մօտ գալու ամէն անգամ որ խզմիք մը ապստրկէր իրեն, ինչ ընելիքը չէր գիտեր:

Վերջապէս, յուսահատած, օրին մէկը հա-

նրմին գնաց ամէն բան խոտտովանելու: Սուրբ ու առաքինի կին էր իր հանրմը, որուն գուժեատր կրնէր Քարաղի: Մարտաւր շատ անգամ Եկեղեցոյ բեմէն: Ու իրեն պաշտպան մը գտնելու առաջադրութեամբ, ցորեկ մը իր հանրմին հետ մինակ մնացած մէկ ժամին, վարանելով, կարմրելով ամէն բան հասկցուց անոր:

Սուրբիկ հանրմ զարմացաւ, չի հաւտաց նախ ասանկ բանի մը գոյութեանը, թերեւս Տիգրանուհին սխալած էր: Յետոյ, բաւ որ իրիկունը իր տղուն հետ պիտի խօսէր, բայց աւելցուց ժպտելով որ այս բոլոր պատահածին յանցանքը Տիգրանուհիին գեղեցկութեանն էր:

— Ազնի սիրտ ունի տղաս, բայց էրիկմարդ է, դուն ալ այնքան ազուր ես որ չեմ զարմանար զրեզ սիրելուն: Մարդ քեզի չի կրնար դիմանալ:

Հաճի Տիգրիկ որուն Տիգրանուհին յայտնած էր իր վիճակը, խնդաց իր վրան:

— Օղո՛ւշ քսաւ անոր, էֆէնտիից տղան կը սիրէ կը քեզի, ալ ի՛նչ կուզես:

Տիգրանուհին քիչ մը ատեն ալ շարունակեց պաշտպանել ինքզինքը անոր ձեռնարկութիւններուն դէմ, բայց կամաց կամաց վարժուեցաւ սիրոյ խօսքեր լսելու անկէ: Հանրմը այդ միջոցին շատ շատ պարգեւ կուտար իրեն, ամսականին մօտ գուժար մըն ալ տասնկով կուտէր: Տիգրանուհին կը խոտտովանէր ինքնիրեն որ ասիկայ միմիայն իր աշխատութեան համար չէր: Յետոյ, բոլոր այս հետապնդումներուն, հալածանքներուն մէջ իր արիւնն ալ կ'եռար, դող կեղէր ու կը սկսէր ինքն ալ փոխադարձ հաճոյք մը զգալու այդ ամենէն: Փախչիլ կը ձեւացնէր, բայց կը ձեւացնէր միայն ու կը ժպտէր:

Փիշեր մը Տիգրանուհին իր սենեակին մէջ գտաւ իր երիտասարդ էֆէնտին, պոռալ ուղեց, բայց վախցաւ ձայն հանելու, աղաչեց:

— Ոտքդ պագնում, էֆէնտիս, մեզք իմ Բայց էֆէնտին կարովի էր եւ իր ոյժին տակ զսպեց զինքը:

— Հանրմս, հանրմս ի՞նչ պիտի բո՛ւ, կըսէր անիկայ դողդալով:

— Խե՛նդ, պատասխանեց երիտասարդը

անոր, մայրս ինձի բաւ որ սենեակդ ես, ու եկայ քեզ գտայ . մորմէս բնաւ մի վախճար :

Ետ ետ երթալով աղջիկը պատին կոթնած կը ալ գինքը գրկող պողպատէ բազուկներուն մէջ անշարժ մնացած . հոս՝ զխնայութեան սյժը կը պահէր . գլուխը պատին դարձուցած բլլալով հանդերձ, իր պարանոցին վրայ կը զգար համբոյրներու կիզումը, ու Տիգրանուհին անձնատուր բլլալու մօտ ու անձնատուր բլլալէ առաջ, իր արդարացումը կը փնտռէր հիմայ, մտածելով որ ձեռքն ե կածր լրեր կը ինքզինքը պաշտպանելու համար ու յանցանքը լրջ չէր՝ եթէ չէր յաջողեր : Անձնատուրներ կան սրտնք վերջին պահուն զղջալով հանդերձ, չեն կրնար իրենց սրտու մէջ ետ կենալ եւ սող մը գիրով իրենց մահը կը բացատրեն, կարգարացնեն . Տիգրանուհին ըրածն ալ ազ կը :

Երկու տարի անեց այս կեանքը . ուզուած ազատինն կը անհիայ որ էֆէնտինն ազան Բերա երթալէն վուզ բերած էր Սուրբիկ հանրմ, հարսի մը պէս հիմայ կը հագնուէր անհիայ ու եկողին գացողին անոր գովեստը բնէլ չէր գաղբեր :

Օրին մէկը, սակայն, Տիգրանուհին հրեւրնդատ . զլուխը կը դառնար, սիրտը կը խտանէր . այս անհանգստութիւնը շարունակից քանի մը օր, բայց սպասուհին վախէն բան մը չբտաւ, բերանը չի բացաւ մէկու մը . քիչ մը ատեն անցաւ ու ծոցս սրտի կեան նշանները երթալով շեշտուեցան : Տիգրանուհին շտարած կը, ինչ բսկիբը ինչ բնէլիքը չէր գիտէր : Միւս ծառաները կը սկսէին քիթերնուն տակէն խնդալ, կատակներ բնեւ, չարչարել զինքը : Այդ միջոցին երիտասարդ էֆէնտին իր մօտը չէր գար, ու տանը մէջ երեսը չէր նայէր . Տիգրանուհին նիհարցեր կը քիչ մը : Յանկարծ օր մըն ալ Սուրբիկ հանրմ զինքը ու շաղարկեամբ զիտեց, նայած քով մը որ կրակէ պատուածանի մը պէս սպասուհին զլսէն մինչեւ սուրը շրջապատեց :

— Մօտ եկո՛ւ, Տիգրանուհի, ըսաւ անոր բիրտ ձայնով մը :

Ու անտեսելով անոր վարանիլը .

— Սանկ, աւելի մօտ :

Մօտէն՝ յրաթիւնը ակներեւ կը, շատ մը կիներու պէս Տիգրանուհին տղեղներ կը, երեսին մարմը թուլցեր, կտուներ կը, փորը անշարժ կերպով դարս կը ցցուէր ու ամէն սիրտը վարնէլուն՝ շախազանց մեծցած կուրծքին յարայքը աչքի կը վարնէր խկոյն :

Ան ատեն բարկութենէն Սուրբիկ հանրմին խելքը զլսէն գնաց

— Փօտա՛ւ, պօտաց անոր երեսն ի վեր, փօտա՛ւ, տուես անպատու եցիր, քե՛զ անհեղձ եղի՛ր :

Մարիամը վեր վազեց հանրմին ձայնը լսելով :

— Հաճի Տիւրիկը կանչեցէք շուտ, սա շունը ատնէ տանի՛, կը պօտար հանրմը :

Երկու ժամ ետքը թէլլալը գտան բերին ու բերանը փրփրելով Սուրբիկ հանրմ իր զայրոյթը դուրս թափեց :

Կեզմաւորութիւնը անանկ բան մըն է որ երբեմն ու վերջ ի վերջոյ անկեզմութեան հետ կը շփոթի եւ անկէ չի տարբերի ինչպէս որ սուտ խօսողներ կան սրտնք իրենց սուտին կը հաւատան :

Ասանկ ալ Սուրբիկ հանրմին բարկութիւնը շինծու բան մը չէր, անկեզմ կը, երբեք կարող չէր հիմայ մտքն անցրնել որ իր գիտութեամբ, իր կամքով, իր կարգադրութեանով ամէն բան եզամ կատարուած կը : Իր բերնին մէջ ամէն վայրկեան յեղեղուող պատիւ պարկեշտութիւն բտտերուն վարժութեամբ՝ ցատազարի մը պէս կը պտար իր ազատինը, Հաճի Տիւրիկը ու բոլոր աշխարհը յանցաւոր գտնելու կ'եղէր :

— Հիմա՛յ, հիմա՛յ, փօտալը թուղ կորստի երթայ, վայրկեան մը չեմ՝ ուզեր տուես ինձ մէջ :

Այս եղաւ իր վերջին խօսքը :

Թէլլալը Տիգրանուհին սենեակը ելաւ . մահուան դողերու մէջ գտաւ անհիայ, սաստիկ ջերմ եկած էր վրան . երեսները կարմրեր էին, մինչդեռ ակտաները իրարու կը զարնուէին :

Միջնորդ կիներ գլխաց անոր, բան մը հարցրնելու պէտք չունէր, անցած դարձածը գիտէր . միայն հարցում մը .

— Քանի՞ ամսու ես, ա՛ղջի :

— Չիմ գիտեր , մրմնջեց միւսը :

Վար իջաւ հանրմին քով . բայց անիկա նորէն սկսեր էր ձայնը բարձրացնել ու ջանքեր կընէր իր զայրոյթը աւելցնելու համար . շարունակ կը յիշէր ասանկ աղբատ կին մը իրը սպասուհի իր տունը բնգոտնելով գործած բարիքը եւ ասոր փոխարէն , գտած սպերախտուութիւնը . սա ազգը ասանկ էր միշտ . աղքատները ասանկ խայտառակ արարածներ էին բոլորն ալ . ու նստած տեղէն թէչը վեր կը քաշէր իրրեւ թէ այս տիղմին չի քսուելու համար : Եւ յանկերգի մը նման , միեւնոյն նախատական բառը կու գար շուրթերուն վրայ . թուքի մը պէս :

— Փօտա՛լը , փօտա՛լը , ով գիտէ ո՛ր ծառնաւ զխէ հաներ է :

Այն ատեն Հաճին նեղացաւ ա՛լ . ձեռքերը մէջքին դրաւ ամբարտաւան ձեւով մը .

— Ինձի նայէ՛ , հանրմ , շտտակն ըսե՛մ , անիկայ խեղճ կնիկ ծառայ մըն է . դուն քու տղուդ խօսք հասկցնելու էիր . հիմայ ալ ելե՛ր ծառայի հետ տեսնուեր է կըսես . ասիկայ մեղք է :

— Ի՛նչ , հիմայ ալ տղուս վրայ մտր պիտի քսէք . իմ տղաս ծառայի վրայ չի թուքներ . բոլոր գեղին աղջիկները , կնիկները իրն են :

— Քու բոլոր գեղիդ մէջ ալ Տիգրանու հիին պէս աղււտը մը չկայ . հանրմ , դուն ե . կու՛ր իմ խօսքս մտիկ ըրէ . ի՛ր՝ գլխէս շատ տաք ու պաղ անցած է . բան մըն է որ եղեր է . ասիկայ առնել անցնելու չէ :

Բայց միւսը կը յամտուէր . չէր բնգոտներ որ իր զաւակը տեսնուած ըլլայ Տիգրանուհին հետ :

Ու վէճը երկարեցաւ . երկուստեք բիրտ բառերով նախատինքներով լեցուած վէճ , որուն մէջ ստորին ու աղտոտ դերը՝ թէլլալ կնկանը դերը չէր :

Սուրիկ հանրմ ուրիշ բանի չէր բողձար . բայց միայն գայթակղութիւնը աւելի չի տարածուած , մէյ մը դուրս նետել Տիգրանուհին :

Հաճին խորամանկ էր , զգաց ասիկա եւ ջանաց օգուտ քաղել անկէ , սպասուհիին համար քանի մը դրուչ ձեռք ձգելով :

— Ա՛յն բան սակով կ'ըլլայ :

— Անոր տալուս Հիւանդանոցին կուտամ ,

կ'ըսէր Սուրբիկ հանրմ . կրկնելով այն խօսքը , զոր իրենց պարտքը վճարել չուզողները՝ յայտնի աւազակ մը չի համարուելու համար , սովորաբար կը գործածեն մեր մէջ :

Ան ատեն Հաճին բերանը բացաւ :

— Ինձի նայէ . ձեր տղաքներուն էյրէնճէին համար տունը աղւտը պիտի մեռնուի , փարատալէն քաշուելու չէ , հասկցա՛ր օղորդ . Հիւանդանոցիդ ստակ տալուդ , տղուդ ծոցոր ձգած աղքատ աղջիկին տուր . չունիկ , չունեւորիկ չէք . փառք Աստուծոյ : Աս աղջիկը տեղ մը չի կրնար աշխատիլ . զաւակ պիտի բերէ , ապրուստ չունի , գեղը հիւանդ էրկանը խրկելու ստակ չունի :

Սուրբիկ հանրմ պոռաց , հայհոյեց , սակարկեց , եւ վերջ ի վերջոյ քսան սկի տուաւ . բայց այն պայմանով որ նոյն վայրկեանին Հաճին առնէ տանի Տիգրանուհին : Ժամը 12ը անցեր էր . Ղազար էֆէնտին ու տղան տուն դարձեր էին վերջին շոգենաւով եւ դիմացի սենեակը նստած , առուտորի վրայ կը խօսէին . տղան հօրը դէմ բարեւ բռնած էր գրեթէ , հնազանդ ու առաքինի զաւկի պարկեշտութեանը մէջ :

Այս ժամուն Գատրգիւղէն Պոլիս գալու շոգենաւ չի կար . Հաճին պարտաւորեցաւ , աղջիկը հետը առած , նաւակ մը վարձել Ղալաթիա անցնելու համար :

Աչունի իրիկուն մըն էր ձմեռնամուտի մօտ Անձրեւ մը կու գար միօրինակ եւ անրդհատ , սեւ քօղի մը մէջ պարփակելով ծովն ու ցամաքը : Նաւահանգիստին մէջ շոգենաւները անշարժ հսկաներու պէս կեցեր էին իրենց խաչածեւ կայմերովը , կարծես թէ բարեւ բռնած : Աջէն՝ Ղալաթիան ու աւելի բարձրը՝ Բերան իրենց անհամար լոյսերը կը սկսէին մէկիկ մէկիկ վառել :

Ու անքած այս նաւակին մէջ , իր փոքրիկ պողջան թեւին տակ , Տիգրանուհին , կամքէ ու գիտակցութենէ զուրկ , ուշադրութեամբ մտիկ կընէր թիւրուն ծովուն մէջ մխրձուելու ձայնին , եւ հետուն մութին մէջ վառուող բիծերը կը դիտէր , երբոր , առաջին անգամ , իր զաւկին խաղալը զգաց որովայնին մէջ :

Դիւղին մէջ Ղազար աղային տանը համար

գայթակհութիւն մը չի սեպուեցաւ ասիկայ . թէ եւ ճշմարտութիւնը քիչ շատ խնայուեցաւ , բայց ամէնքը բսին որ Տիգրանուհին ծառաներէն մէկը գլխէ հանելուն համար վնասուած էր : Սուրբիկ հանրմին բարեպաշտութեանը , ստուուած ավարտութեանը վրայ այս առիթով աւելի շատ խօսուեցաւ . անոր տանը բարոյ յականին համար քիչ մըն ալ աւելցաւ կարծես : Տղուն աղջիկ տալ ուղող կիները միաբերան գովեցին մայրն ալ , զաւակն ալ :

— Փօստալին մէկն էր , կրտէին սպասուհին համար , ասանկ տան մը խըյմեքը չի գիտցաւ :

Առուտորի մէջ Ղազար աղային հետ գործ ունեցողներն ալ միեւնոյն կարծիքէն էին . Ղազար աղան , Սուրբիկ հանըմը կը մեղքնային , անանց ի գործ դրած բարիքին դէմ եղած ապերախտութեան վրայ կը զարմանային շարունակ :

— Աշխարհք է աս , կը կրկնէին զլուսնին երեքնեղով :



Վրայէն չորս տարի անցեր էր , երբ այս պատմութիւնը ինացայ ես բարեկամ տունի մը մէջ ուր Տիգրանուհին կաշխատէր իբրեւ սպասուհի :

Միշտ աղուորիկ կին մըն էր , թէ եւ տարիքին հակասող ծանրութիւն մը կար դէմքին վրայ :

Յղութեան վերջին ամիսները , տղարեքը Հաճի Տիւրիկին տանը մէջ եղեր անցեր էր , կայտառ , կարմիր , խնդուներես մանչ մը ձգելով իրեն , այն պահուն ուր անդին գեղին մէջ էրիկը թոքատապէ մը կը մեռնէր :

Մեծ ցաւ մը չէր զգացեր Տիգրանուհին այս չի ճանչցած էրկանը մահէն . բայց նորէն թիկունք մը պակասած էր իրմէն այս մահով , որչափ ալ ենթադրական բան մը ըլլար ատիկայ : Ու աւելի մեծ սիրով մը փարած էր այս զաւակին որ հայր չունենալուն համար կրկնապէս իրենն էր :

Ինքը աշխատելու ստիպուած ըլլալուն , իր զաւակը օտար կնոջ մը յանձնելու — հարկադրուած էր , եւ օրին մէկը անոր ալ հիւանդանալուն լուրը բերին . վազեց գնաց , բայց մանկիկին վերջին ժամուն միայն հասաւ . թփռկ , դեղ օգուտ չըրին , ոչ ալ Ս .

Մասունքը զոր Ամենաիրկիչէն բերել տուաւ . թոչունի մը պէս առանց տրտունջի հոգին աւանդեց անիկայ իր գիրկին մէջ :

Տիգրանուհին մարդ մարդասանք չունէր . Հաճի Տիւրիկն ալ գեղն էր այդ միջոցին . ինքն իր գլխուն պարտաւորեցաւ մեռելաթաղի բոլոր ջնջին ու ահաւոր պատրաստութիւնները տեսնել : Ինքը հագուեցուց , սաւեց մանկիկը , ինչպէս վերջէն կը պատմէր լալով : Յետոյ , եկեղեցի գնաց փախագ յայտնելով որ կարելի եղածին չափ շքեղ ըլլայ յուղարկաւորութիւնը :

— Մեղք ես , կնիկ , ստակ չունիս , ըսին իրեն ժամէն :

Անիկայ յամառեցաւ , ուզածին վճարեց , շատ մը մտեր վառել տուաւ , պնդեց որ երկու քահանայ գտնուի արտորուութեանը . մանաւանդ չուզեց որ ճաղի մէջ դնեն իր զաւակը , վախնալով որ հողին մէջ չի մտնանիկայ . սնտուկ ապսպրեց , համոզուած ըլլալով որ անոր մէջ պիտի պատուարուի պզտիկը :

Օր մը շարունակ ասոնցմով զբաղեցաւ , ամէն բան իր ձեռքովը կարգի գրաւ . ժամին մէջ ինքը մինակ էր եւ մինչեւ գերեզմանատուն , զլուսր բաց , ինքը մինակ հետեւեցաւ դագաղին : Հոն , իր աչքին տակ , տեղաւորել տուաւ զայն հողին մէջ ու ետ դարձաւ իր ծառայած տունը , երկու օր բացակայ մնալէ ետքը :

Աչքերը ուռած էին լալով , բայց գանգատի բառ մը չելաւ բերնէն . զլուսը կախած , առաջուան պէս աշխատութեան տուաւ ինքզինքը :

Անկէ վերջը իր բոլոր մտմտուքը , իր բոլոր առաջադրութիւնները այս պզտիկ հողակոյտին յատկացան : Ամսականն ժողված առջի ստակով՝ գերեզմանատան մէջ պզտիկ հող մը գնեց .

— Երկու հոգինոց հող մը , ըսաւ ցած ձայնով մը թաղականներուն :

Ստակը վճարեց եւ թուղթը ձեռքը բռնած իսկոյն գերեզմանատան վազեց , զաւակին մարմինը հոն փոխադրել տալու համար : Քիչ ատեն վերջը , պզտիկ պատով մը շրջափակել տուաւ այդ պզտիկ հողը . վերջն ալ քար ժը դնել տուաւ անոր վրայ : Բոլոր վաս-

տրկածը հոգ կը ծախսէր . ամէն ատեն նոր
բան մը ունէր շինելիք , աւելցնելիք , գեղեց-
կացնելիք այդ սեղին մէջ :

Ու մեռելոցին օրերը , քանի հաստ որ մե-
ռելոց օր կայ տարւոյն մէջ , մեծ ու պղտիկ
ցնծութեան օրեր կ'ըն իրեն համար : Աստուծո
կանուխ կ'ելլէր . իր այրի կնոջ արգուզարգը
կ'ընէր , լուրջ ու հանգիստոր արգուզարգ
մը , ու ճամբայ կ'ընար դէպ ի գերեզմանա-
տունը : Պզտիկ տաղանին քով չ'ըքած՝ եր
կար բարակ ու ցած ձայնով կը խօսէր իր
գաւկին հետ , անոր մանուկի բարբառովը :

Ամէն հեղուն աչքաւորին օրհնել կու տար գե-
րեզմանը , հարուստ մը աւելի առատածեռ-
նութեամբ առլ վ օրհնողը :

Դարձին՝ երանութիւն մը կար անոր գէմ-
քին վրայ :

— Ո՞ւր գացեր էիր , Տիգրանու հի , կը
հարցնէին անեցիները , իրրեւ թէ չի գիտնա-
լով անոր ո՞ւր երթալը :

— Հանժ'մ , զաւկիս գացի , կը պատաս-
խանէր ուրախութեամբ :

Գ. ԶՕՀԲԱՊ

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ Մ Ը

Մեր գրագէտները կը փճանան՝ սրով հետեւ
իրենց գործերը հրատարակողներ կամ մեկե
նասներ չեն գտներ . — ահա՛ մեր գրականու-
թեան համար վերին աստիճանի շահեկանու-
թիւն ունեցող , յաւիտենական դարձած իրն-
զիր մը դմբակորէն իրական , սրուն նորէն
կոկիտի այժմէութիւն մը տաին Արտաշէս
Յարութիւնեան եւ Յ. Մրմրեան , մէկը իր
«Ինչպէ՛ս կը փճանան» եւ միւսն իր «Գլուխս
ողջ քուղքս՝ մնախի» ցնցող յօդուածներովը :

Այս այժմէութեան աստիճ. գրողներուն
մէջ նորէն գտանապէս գանդատողներ եզան
մեր հարուստներու ներկայ անտարբերութեան
դէմ՝ հանդէպ գրականութեան որ պէտք էր
ժամու եւ զարթոյն հաւասար սեղ մը ունե-
նար անոնց սրտերուն մէջ : Խնդիրը այս տե-
սակէտէն միայն նկատելով՝ ես պիտի ըսէի թէ
մեր հարուստները այնքան մեղադրուցներէն
չեմ՝ եթէ չեն ուզեր մեկենասներ բլլալ եւ
չեմ՝ ալ կրնար ընդունել թէ անոնց մէջ ամէն
բարի տրամադրութիւն խստու մեռած ըլլալ
եթէ ստոյգ է որ մեր հարուստները քիչ կամ
չտա կ'օգնեն ամէն կարգի բայ նպատակ հաս-
տատութիւններու եւ ձեռնարկութիւններու
նոյն իսկ սմանք մեծագումար նպաստներով
կրնանք յուսալ ուրեմն թէ անոնք աստիճա-
նով մը պիտի նպաստեն գրականութիւնը զար-

գացնող ձեռնառուութիւններու ալ , եթէ չեն
նպաստեր՝ անշուշտ պատճառ մը կայ :

Մեր հարուստները բնի համար առումա-
ւոյն աստիճան գարգացած տարր չեն որ ուղ-
ղակի կարենան բմբունել գրականութեան օգ-
տակարութիւնը կամ գեւ. հատել գրական գործի
մը արժէքը : Եւ մարդ մը ամէն բանէ առաջ
իր ընելիք ձեռնառուութեան նպատակին կա-
րեւորութիւնը բմբունած՝ եւ ասոր օգտակար
արդիւնքի մը ծառայելուն համոզուած բլլա-
լու է որ այդ ձեռնառուութիւնն ընելու մղուի
Մեր նախնիք , ու հիմակ իսկ բարեպաշտ հա-
րուստներ , եկեղեցիներ կը կատուցանէին ու
կը կատուցանեն անոր համար որ եկեղեցին
անվիճիկ նուիրականութիւն մը ունեցած է
իրենց համար , սրուն օգտակարութեան վրայ
իրենց համոզումը խորունկ հաւատք մըն է
զարեքու ընթացքին մէջ արմատացած ու
բնագրական դարձած : Նմանապէս մեր հա-
րուստները ազբատին ուղորմիլ գիտեն՝ սրով-
հետեւ ուղորմութիւնը իրրեւ բարձր աստիճ-
նութիւն ճանչցած են եւ անոր օգտակարու-
թիւնը բացայայտ կը տեսնեն . բայց միս կողմէ
այսօր չեն ուզեր փարա մը տալ գրական գործի
մը հրատարակութեան համար , սրով հետեւ չեն
կրնար գրականութիւնը ո եւ է կերպով ար-
ժեցնել ու համոզուել թէ անոր նպաստելով

օգտակար ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլան Այն օրը, սակայն, ուր անոնք գրականութեան քաղաքակրթիչ ու աշխուստոյիչ դերը ըմբռնել կարենալու չափ մտաւորական զարգացում մը ստացած ըլլան, մէկ խօսքով գրականութենէ հաճոյք վզան ու հասկնան ինչպէս կը հասկնան մանիֆաթուրայէն կամ աֆիօնէն, ես կը հաւատամ թէ այն ատեն նայեալն հոգածութեամբ պիտի ուզէին նպաստել գրականութեան ալ ինչպէս ուրիշ ո եւ է բարենպաստակ ձեռնարկութեան :

Սակայն ենթադրելով որ այս կամ այն հարուստը գրական երկերու օգտակարութեան վրայ գէթ տարրական գաղափար մը կազմած ըլլայ եւ բարի արամագրութիւններ ունենայ նպատակու համար այս տեսակ երկերու հրատարակութեան, ինչպէ՛ս պիտի ընէ այդ նպատար . իր դուռը ափ առնող առաջին հեղինակին գիրքը պիտի հրատարակէ՞ իր ծախքով . եւ եթէ հրատարակէ՛ ազէկ բան մը ըրած պիտի ըլլա՞յ : Չեմ կարծեր : Ծառ ազէկ գիտեմ թէ մեր հարուստները ի՛նչքան զիմուսներ կ'ընդունին այս տեսակէն . այսինչ վարժագետը թուարանութիւն մըն է շիներ... նո՛ր մեթոտով . այնինչը՝ աշխարհագրութիւն մը, ուրիշ մը՝ թարգմանութիւն մըն է բրեր՝ եւ մէկ ուրիշ մըն ալ ցափուտաւք քերթուած ներ իրարու կարկեղով հատար մըն է բանաստեղծեր եւ ամէնքն ալ մէկ բերան հազար գովք կարդալով իրենց գործերուն, կազեն որ անոնց հրատարակութեան նպատակ հարուստը : Բայց սրովհետեւ ան իրենն զիմուսներուն ներկայացուցած այդ գործերուն ճշմարիտ արժէքը գնահատելու կարողութիւնը չունի, իր բոլոր բարի արամագրութիւններովը հանդերձ չկրնար անոնց մէջէն բնորութիւն մը բնել, հետեւարար աւելի յարմար կը սեպէ ամէնքն ալ մերժել : Եւ շատ ազէկ կ'ընէ մերժելովը, սրովհետեւ հաւանականաբար ի վտար ծախք մը ըրած պիտի ըլլար անպէտ գործ մը հրատարակելով, ինչպէս որ օրինակներն ունինք աչքերնուս առջեւ :

Յայտնի կ'երեւայ ուրեմն թէ գրականութեան նպատակու այս ձեւը եթէ գործադրողներ ալ ունենար, ժամուն դուռը հանդիպող մուրացիկին ողորմութիւն տալու պիտի

նմանէր : Ասի բարեգործութեան շատ նախահան մէկ ձեւն է որ շատ անգամ սխալ արգիւնքներ կու տայ եւ իր նպատակին չի ծառայեր, սրովհետեւ կրնայ ըլլալ որ, զոր օրինակ, այսպէս առանց ընտրութեան ու քննութեան նպաստ ընդունողներուն մէջ ծոյլեր եւ դատարկագորտներ ալ գտնուին :

Եւրոպոյի մէջ շատոնց վերցած է նպատակու, բարեգործելու այս նախնական ու անբաւական ձեւը, տեղի տալով բանասեր եւ կազմակերպեալ դրութեան մը : Մեր մէջ ալ արդէն հիւանդանոցները, որբանոցները եւ աղքատախնամները հիմի դրած են այդ բարբար դրութեան եւ մեր հարուստները՝ զոր օրինակ, Հիւանդանոցին սիրայօժար կը նըպատեն այսօր, սրովհետեւ կատարեալ վրստահութիւն ունին թէ իրենց նպատար բուն իր նպատակին պիտի ծառայէ : Ես կը հաւտամ ուրեմն թէ գրականութեան համար ալ եթէ ըլլայ այն տեսակ մարմին մը կամ հաստատութիւն մը որ իր ձեռնհասութեամբ հարկ եղած վտահոսութիւնը ներշնչէ, մեր ջոյները այդ նպատակին համար ալ շեն զլսնար իրենց դրամը ա՛յն աստիճանաւ որքան ուրիշ ազնիւ նպատակներու համար, քանի որ ապահով պիտի ըլլան թէ ան պիտի ծառայէ ճշմարտապէս օգտակար նպատակի մը, ու մեր երազած «հրատարակչականը» ահա ճիշդ այս մարմինը պիտի ըլլար : Ոսոքս անշուշտ այն տեսակ գձուձ ետանդ հարուստներուն համար չէ որոնց հոգին իրենց ոսկիներուն փակած է եւ որոնց միակ խոնարհ է դրամը : Այս տեսակներն անշուշտ հրատարակչականն ալ պիտի մերժէին, ինչպէս պիտի մերժեն թերեւս Հիւանդանոցին յառաջիկայ նուազահանգէսին աստուակը :

Հրատարակչական մարմնոյ մը գոյութիւնը ուրիշ տեսակէտով սա առաւելութիւնն ալ պիտի ունենար որ գրականութեան նպատակու ազնիւ գաղափարն ալ կամայ կամայ կամայականութեան սահմանէն դուրս հանելով՝ մեր բարքերուն մէկ անբաժան մասը կազմել պիտի տար, տեսակ մը պարտաւորիչ տուրքի հանգամանքը տալով այդ նպատակն ալ զոր պիտի շմերժեն վճարել մեր հարուստները ո՛ր եւ է ձեւի տակ, ինչպէս գրեթէ շեն

կրնար մերժել տարեկան տուրքի մը կերպարանքը առած ուրիշ շատ մը նպատակները : Չէ՛, պէտք չէ այնչափ յուսեանս ըլլալ՝ եթէ մեկե- նասեղու հին բարի դրութիւնը կամ կամեցու- դութիւնը ջնջուած է մեր հարուստներուն բարքերէն : Նոր բարքերը նոր պահանջում- ներ ունին , պէտք է նոր միջոցներով՝ զա- նոնք շահագործել : Ինչ որ կը պակսի մեզի՝ թերեւս մեկեկեկեկեկ յօժարամիտ հարուստ- ները չեն , այլ վտահայիլ , ձեռնհաս մար- մին մը , հրատարակչական մը : Անգամ մը որ այդ մարմինը կազմուի ու հարկ եղած դիմումներն ընէ , ես հաւատք ունիմ՝ թէ ան պիտի գտնէ մեր գրասէր հարուստ- ներէն , նոյն իսկ էսնաֆ դասակարգէն ալ հարկաւոր աջակցութիւնը , բաժանորդագրու- թեան կամ ուրիշ որ եւ է ձեռով , մինչեւ որ բոլորովին բաւարար դրամագլուխ մը կազմե- լով , ինք իր եղովը տապիւնելու վիճակին հասնի : Արդէն այս գործին համար մեծ կակ գումար մըն ալ պէտք չէ , այնպէս որ քանի մը անձերու բարի կամեցողութիւնը միանա- լով բաւական է միջտեղ բերելու հարկաւոր համեստ գումարը գործին սկզբնաւորութեան համար : Առայժմ զանց կընենք խօսիլ այն


հեռանկարին վրայ՝ ուր հրատարակչական ձեռնարկութիւնները մեր մէջ ալ շահարեր գործ մը պիտի բլլան , դրամագլուխներն ինք- նին իրենց ձգելու աստիճան , ինչպէս եղած են Եւրոպայի մէջ : Այդ հեռանկարը ս'վ գի- տէ դեռ ի՛նչքան երկար ժամանակի կարօտ է իրագործուելու համար :

Ուսումնական Խորհուրդը եթէ քիչ մը փա- ռասիրութիւն ունի եւ կուզէ տեւական յի- շատակ մը թողուլ իր պաշտօնավարութենէն , թո՛ղ այս մեկ գործը յաջողցնէ եւ անկէ ան- դին՝ կրնայ հանդարտօրէն մէկդի թողուլ իր բոլոր ծրագիրները . . . մանկավարժական համալսարանի դասախօսութիւնն ալ միասին :

Առաջարկ մը . - Իզմիրեանց Գրական Յանձ- նածոցով մը ունինք , շատ սահմանափակ ի- րաւասութեամբ եւ գործունէութեամբ : Քանի որ արդէն կազմակերպուած , օրինաւորապէս ճանչցուած մարմին մըն է այս Յանձնածոցովը , կարելի չէ՞ արդեօք անոր իրաւասութեան սահմանները քիչ մըն ալ ընդարձակելով հրա- տարակչական մարմնոյ մը կազմակերպութիւնը տալ : Գողափար մըն է այս զոր ձեռնհաս մարմնոց նկատողութեան կը յանձնեմ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԱԶԱՆՃԱՆ

Ա Ր Բ Ե Ր Ը



Աչքեր աշխոյժ ու թրխորակ
Ուր ցոլանայ նայուածք ժպտուն ,
Աչքեր ծափ ու կապուտակ
Ուր կը փքքի ամբողջ գարուն ,
Կը հրմայեն զիս հաւասար ,
Աղտը աչքին ջեմ դիմանար :

Դեռ մանուկ է , ձայնը թոթով
Ու լեզուն է կէս բարբարոս ,
Բայց իր աչքեր որ եռանդով
Ու հրճուանքով են պերճախօս ,
Երբ ինձ յառին մտերմարար՝
Իր նայուածքին ջեմ դիմանար :

Դեռ՝ աղջիկ է , հոգին տարտամ
Խոհեր ունի մշուշ՝ անգոյն .
Սակայն արդէն սերն անրզգամ
Իր աչքին մեջ դերե է բոյն .
Երբ զիս դիտե՛ պատահարար ,
Իր նայուածքին ջեմ դիմանար :

Դեռ նոր հարս է՝ հեշտ ու փափուկ
Երբանիկ կին՝ կ'ըսեն իրեն ,
Բայց արցունքի կաթիլ գաղտուկ
Կախուի սիրուն բարբիջներեն ,
Ու երբ ժպտի սուս՝ բռնարար ,
Խեղճ նայուածքին ջեմ դիմանար :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՆՈՐ ԴԱՐՈՒՆ ՀԵՏ ԾՆԱԾ ՆՈՐ ԱԶԳԸ

Չեմ կարծեր որ մէկու մը մտքէն կրնար անցնիլ թէ Ուկրաինոյ մեծ կողին, Աւստրալիա, որ Եւրոպայի կէտէն պակաս ընդարձակութիւն չունի, որ մը պիտի ստանար այն վիճակը զոր պարզեց 20րդ դարու առաջին օրը, հոչակելով աշխարհի առջեւ իր հասարակապետութեան կազմութիւնը, այսինքն նոր դարուն հետ նոր ազգի մը ծնունդը: Եւ ինչպէ՞ ոչ ոք կրնար գիտնալ նախապէս թէ Ուկրաինական այդ աշխարհը այսօրուան նախանձելի պերճ վիճակը պիտի ունենար, նոյնպէս կարելի չէ գուշակել թէ 4 միլիոնով կազմուած այս նոր Հասարակապետութիւնը զար մը վերջինչ ահպին զարգացում պիտի ունենայ, ճիշդ ինչպէս որ չէր գուշակուած երբէք Ամերիկայի Միացեալ Նահանգաց այսօրուան 75 միլիոննոց ահաւոր զօրութիւնը՝ երբ դեռ նոր կը ծնէր ան, նոյնպէս 4 միլիոն հոգիով, գրեթէ քիչ աւելի քան դար մը առաջ: Միայն թէ մեծ տարբերութիւն մը կայ այս երկու Հասարակապետութեանց ծնունդներուն մէջ: Թէպէտ երկուքն ալ Բրիտանական արգանդի սաղմ ու սրունդը, մէկը զբաղաշատականութեան Արմինի պէս իր ծնողին որովայնը պատուելով դուրս ելած է 125 տարի առաջ, այն է Ամերիկեանը, միւսը՝ Որմզլի նման Զրուանայ հաճութեամբ աշխարհ կուգայ միեւնոյն արգանդէն, ըսել է աւելի սիրելի կ'երեւայ բնականաբար Աւստրալիան Հասարակապետութեան ծնունդը քան Ամերիկեանինը լաշա իրենց հասարակաց մօր՝ Անգլիոյ, որուն նման վիթխարի զաւակներ ոչ մէկ ազգ կամ պետութիւն ունեցած է երբէք, կ'ուզէ ակամայ՝ կ'ուզէ կամաւոր ըլլայ անոնց կազմութիւնը եւ ծնունդը:

Բայց Ամերիկեան Հասարակապետութիւնը թշնամութեամբ կեանք առնելէ վերջ բարեկամացաւ ապա իր ծնողքին հետ: Արդեօք Քվիբեյեան այս նոր Հասարակապետութիւնը,

որ քաղցրութեամբ լոյս աշխարհ կուգայ, որ մը չպիտի՞ թշնամանայ իրեն կեանք տուողին հետ: Ինչո՞ր մըն է ասիկա, զոր գուցէ լուծել շատ դիւրին չերեւար այժմէն, միայն թէ կրնայ մտածուիլ որ եթէ թշնամութեամբ սկսողը կրնայ եղեր ետքէն բարեկամանալ, բարեկամութեամբ կեանք առնողը ինչո՞ւ պիտի թշնամանայ: Թէեւ բոլորովին անկարելի բան մըն ալ չըլլայ այդ, բայց կարծել թէ հաւանականութիւնը աւելի լաւատեսութեան քան յոռետեսութեան կողմը կը հակի, գուշակութիւն ընել չնշանակեր: Գոնէ Անգլիացիք այդպէս կարծեր են, անշուշտ, որ յօժարութեամբ եւ հաճութեամբ երկինցին եւ աշխարհ բերին Եւրոպայի կիսուն ընդարձակութեամբ այս նոր Հասարակապետութիւնը, որմէ աւելի մեծ յիշատակարան չէր կրնար կանգնուիլ երկրագնդի մակերեւոյթին վրայ ներկայ 20րդ դարու նոր տարեմուտին առթիւ: Բարիզի 1900ի Արուեստահանդէսը ինչ արժէք ունի այս կենդանի ցուցադրութեան հետ բազդատմամբ: Այս մասին ալ միթէ Անգլիա չգերազանցեց Ֆրանսան, զի մինչ այս վերջինը արեւելիական ցուցահանգէս մը սարքեց նոր դարամուտին առթիւ, առաջինը նոր ազգի մը ու հասարակապետութեան մը ծնունդը հոչակեց: Այսպիսի տեսարան մը բովանդակ արեւելիական պատմութեան մէջ իր օրինակը չունի բնաւ: Զարմանալին հոն է որ երբ Բրիտանական պետութիւնը այսպէս սիրայօժար նուիրեց ինքզինքը իր հպատակ մէկ ժողովրդեան այսքան ընդարձակ իրաւասութիւններով առանձին քաղաքական կեանք ու դոյութիւն տալու, իբր ինքնուրոյն պետութիւն, այնքան յամառութեամբ կը մերժէ իր քթին տակ եղող Իսլանտայի տալ պարզ ինքնավարութիւն մը բնիկ Խորհրդարանով: Զոռոնանք ըսելու թէ, Անգլիա Աւստրալիոյ չնորհելով գրեթէ կատարեալ ինքնազուտի Հասարակա-

պետութեան մը բոլոր իրաւունքները, կը գտնանայ խիստ թեթեւ կապով մը միայն բանն ցընելու իր վերին գերիշխանութիւնը, որ աւելի բարոյական ու երեւութական պիտի ըլլայ քան գործնական եւ իրական: Եւ զիտեղի է որ Իսլամական ապապայ խորտու մը աւելի զիւրին պիտի ըլլար զուգի իր մտաւորութեան շնորհիւ, քան Աստուծոյ ընդհանրութեան մը քանի որ այնքան նեղու է, բայց անշուշտ Անգիրա զիտէ ինչ որ կրնէ: Գուրաքն նայողներուն ուրիշ բան չմնար ընել

եթէ ոչ զիտեղ ինչ որ տեղի կ'ունենայ, եւ ընդունիլ աներկբայապէս ինչ ներկայ 20-րդ դարու սկզբնաւորութեան տակն աշխարհի վրայ կատարուած ամենամեծ զէպրը ուրիշ բան չէ ապահովարար, բայց ինչ Աստուծոյն այս նոր Հասարակապետութեան կողմնութիւնը եւ հաշակումը, որ զերազանցապէս շքեղ տունախմբութիւն մըն է արգարեւ նոր գարամուտիւ ի պատիւ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

ՄԱՍԻՍԻ ԹՈՒՇԱՏԵՏԲԸ

Ս. Պատրիարք Հայրը կազանդի ասթիւ իր առաջին մատուցի Հիւանդանոցի պատասխարեալներուն նուիրեց, շարաթ օրը այցելելով անոնց, չընկելով Ազգին Տան բոլոր յարկերը, եւ միտքարութիւն ու օրհնութիւն ստեղծելով իր շարժը: Այցելեց նաեւ Որբանոցը եւ օրբերուն շաքար բաշխել սուտա: Ի դժբանքին Եկտի-Գուրէ, Ն Ամենապատուութիւնը Պատրիարքարանի մէջ գիշերեց եւ կիրակի առտու նախագահելով Մայր-Եկեղեցւոյ արարողութեանց, քարոզ խօսեցաւ: Բարոյին նիւթն էր Նոր Տարիի եւ Նոր Գարու ասթիւ ընդ հանուր տեսութիւն մը, որուն մէջ յիշատակեց ժիժ դարուն սկիզբը Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոսին վրայ գտնուող Բարերգչի Յովհաննէս Պատրիարքին կեանքն ու գործերը: Ժամերգութիւններէն ետքը, Ս Պատրիարք Հայրը Պատրիարքարանի մէջ մինչեւ իրիկուն ընդունեց Եկեղեցական եւ աշխարհական հովան բազմութիւն աղայիներու եւ մարմններու այցելութիւնները: Նոյն օրը, գաւառային առաջնորդներէ շնորհատրական ն. սագիրներ հասան Պատրիարքարան:

Երուսաղեմի Պատր. Փոխանորդ Տ. Գեորգեպիակ. Երէցեան, կիրակի օրը, Երուսաղեմաւան մէջ ընդունեց շնորհատրական այցելութիւններ Տարեգլխոյ ասթիւ:

Սուրհանդակ օրասթիւրի, զնահատակի նախաձեռնութեամբ մը Ամանարի ասթիւ հրաւիր ուղղեց իր ընթերցողներուն՝ որք եւ նորքատ տղոց պատու գնելու համար նուիրահատարութիւն ընելու: Այս լրագրական հրաւերը համակիր ընդունելութիւն մը գտաւ եւ բաւական գումար մը հասարակեցաւ, նուիրատուներուն ցանկը հրատարակուելով թերթին մէջ օրը օրին:

Նուպար փութայի շիրիմը բաւական ժամանակ ի վեր կը պատրաստուէր կարող վարպետներու ձեռքով: Այդ շիրիմը, որ գե-

ղարու ետտական գործ մըն է, այս միջոցիս կը վերանորոգուէ հանգուցեալին զերեզմանին վրայ, Ազգ. քանդակարար Ս. Պօլսո-Պատրիարք Եկեղեցւոյ բակին մէջ:

Բիւրակն շարաթաթերթը, նոր տարիէն, հրատարակ ելաւ նոր ծրագրով եւ խմբագրութեամբ իրաւի. Յակոբոս Լ. Ք. Ճէ-ճիգեանի, Ռոպէրտ Բոլթի բազմահատու ստեղծին: Կը շնորհատրենք յարգելի բրտիտտորին այս բանասիրական ձեռնարկութիւնը եւ յաջողութիւն կը մաղթենք:

Մ Ա Ս Ի Ս Պ Ի Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ի Կ Ի Ն Ը
Ձ Ե Ղ Չ Ո Ի Ա Ծ

Ներկայ շրջանի սկիզբէն զգալի զեղը մը ըրած եղք ՄԱՍԻՍԻ տարեկան բաժանորդագրութեան գետնի վրայ, Կ. Պոլսոյ համար իջեցնելով շայն ՅԻՍՈՒՆԸՂԱՐՍ գրու շէն ԲԱՍՈՒՆ գրու շի, եւ գատուներուն համար ՅԻՍՈՒՆ գրու շի, թրգ թատարութեան ծարքը Խմբագրութեանս վրայ ըլլալով, Պրտիկ զհոգութիւն մըն է այս գոր կրնենք, յիշեցելով միայն թէ բաժանորդագրիներու վճարումը կլանխիկ պէտք է ըլլայ: Այս ասթիւ, կը խնդրենք նաեւ մեր գատուային գործակալներէն ու բաժանորդներէն որ հաճին նախորդ չըջանէն յետամնաց բաժանորդագրիները հասցնել մեզ անյ սպաղ:

Արտօնատեսի Կ. Ս. Իլիթի ձեռն

Տպագրութիւն Յ. ՄԱՍԻՍԻ ՈՍԵԱՆ
Կ. Պոլս, Յրեանձըլար Եօղուշու, Թիւ 27

ԸՆՏԻՐ, ՀՈՏԱԻԷՏ, ԽՆԱՅՈՂԱԿԱՆ

ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ



ԹԷՅ

ԹԷՅ

ԹԷՅ

Կով թող գիմեն ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատան, ուր ամենամեծ խնամով, զգուշաւորութեամբ կը գործադրուին ամէն կարգի յանձնարարութիւնք՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ: Դիւրութեամբ համար թէյերուն փոխարէնը կարելի է վճարել նաեւ երբ ապրանքները բեռցուին ու խօշտիակներուն ներկայացուի գնողին: Կեղծ թէյ չգնելու համար հաճեցէք ուշադրութիւն ընել վերի մարքային եւ ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ անուանք: Կեցրածատեղին՝ Կ. Պոլիս, Պահճէ Գարու, Ճէլալ Պէյ խանի կից, թիւ 10, Կ. Եաւրուսեան Յ. Իսազուլեան մեծ վաճառատունը:

Ամէն տեսակ թէյերու նոր բերքերէն մեծ քանակութեամբ հասած է ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը: Թէյի սիրահարներն ու ամէնէն փոփոխազատներն իսկ վերջին ծայր գոն պիտի մնան այս թարմ թէյերէն, որոնք ընտիր, առողջապահիկ եւ հոտաւէտ բլլալով հանդերձ անմրցելի ըսուելու ստատեան ստան են:

Գաւառներու յաճախորդք թէյ գնելու համար պէտք չունին անձամբ գալու, նամա-

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Ա Լ 1884

Հ Ա Ն Ր Ա Ծ Ա Ն Յ Յ

Շ Ա Պ Ի Կ Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ա Տ Է Ր

Մ. Տ Է Ր - Դ Ա Ի Ի Թ Ե Ա Ն

Կ
Ի
Պ
Մ
Կ

Կ
Ի
Պ
Մ
Կ

Թիւ 21, Ղալաթիա, Վոյվոսա փողոց, Դալղիակլան նամակասան դէմ

Սխառ աժան գիներով կը ծախէ Ֆլանկ, քթան եւ բիքէ չապիկներ, փողկապ, օձիք, թեւնոց, կոճակ (տակեզօծեալ ու պարզ), գուլպայ, թաշկինակ, գլխի, խոզանակ, սանաթ ու անուշահոտութեանց ամենաբնասիր տեսակներ:

Միշտ խնամով ու գիւրամատչելի գիներով կը պատրաստէ նաեւ չափու վրայ ամէն տեսակ չապիկ, գիշերազգեստ, օձիք, թեւնոց, ու կը կատարէ ներքին ճերմակեղինաց յանձնարարութիւններ:

Հանրածանօթ Մ. ՏԷՐ ԴԱԻԻԹԵԱՆ չապիկի գործարանը նորաձեւութեան յանձնարարութեանց խնամով պատրաստութեան ու գիներու տարապայման աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի առն մըն է:

5-15

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ ԱՁԳ. ՇԻԱՆԴԱՆՈՅԻ. 1901. Աւստրալիոյ ՀՊԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ. — Այս տարի գրեթէ բոլորովին նոր պարունակութեամբ եւ խնամուած սպազրութեամբ հրատարակուած է, Մատթէոսեան սպորանէն, պատկերազարդ, Զանազան գիտելիքներու բաժնին գլխաւոր նորութիւնն է Ուսումնասիրութիւն մը Կ. Պոլսոյ Հայոց եւ իրենց Պատրիարքներուն զրայ, Թուականներու հատուածը շատ աւելի ճոխացած է, Նոյն պէս, գործի մարդոց, ընտանիքներու վերաբերեալ մասերը, վիճակագրական տեղեկութիւնները եւայլն: Գին 10 զրուշ:

THE GRESHAM

ԿՐԷՇԱՄ

ԱՆԳՂԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԿԵԱՆՔԻ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԻՄՆՈՒԱԾ Ի ԼՈՆՏՈՆ

1848 ԻՆ

Դրամագլուխ եւ երաւխաւորութեան գումար աւելի քան 175,000,000 Ֆրանկ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԿԱՅՈՑՈՒՑԻՉԲ ԷՏՈՒՐՏՍՍ ԵՒ ՈՐԴԻ

Ալպրմնի խան, , Կ. Պոլիս:

Հ Ա Ս Ս Ա Տ Ե Ա Լ 1852

ՏԲԹ. Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ – ԱՏԱՄՆԱԲՈՅԺԲ

396, ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱ. 396

(Եաննի գարեջրասան վրայի յարկը, ճիշդ Չրպուհեանց դեմը)

Կատարելագործեալ գործիքներու միջոցու ամենաառատիկ ցաւած ահրաները մեկ անգամ կը լեցնեն. ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորահար եղանակու նորը, ճաշահար եւ դիմացկուն արհեստական ահրաներ կը պատրաստեն, յար եւ նման ընտանիքի. դիմի մեղաւորութիւն շատ սարիքի, ծանուդութիւն եւ ազատ արձանագրութիւն երաշխաւորուած:

Բերնի հիւանդութիւնք կատարելագլխ կը բուժուին ինչպէս նաեւ թերեցուցիչ գեղերու եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ, առանց ցաւի ատամնահանութիւն:

Յ. Գ. Չմեաները կիրակի օրերն ալ (միևնչեւ կես օր) ինչպէս նաեւ ամէն օր (միևնչեւ կես գիշեր) հիւանդ կ'ընդունին:

Նամօք. — Պոլսոյ կողմը մասնաճիւղ Չմեաներ.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻՒ 200

Կալարա-Մերայի Լիւսին դեմ

Ամէն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

Յ. ԱՄԱԹԷՈՍԵԱՆ ՏՊԱՐԱՆԻՆ մէջ գործ կայ երկու առաջնակարգ գրաչարի համար որոնք հայերէնէ զատ քաջափարձ ըլլան նաեւ ֆրանսերէն չարելու մէջ. Անոցուա է ներկայանալ առանց լաւագոյն յանձնարարականի:

ՆԱՏԻՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ՆԱՏԻՐ լուսանկարչատունը այս անգամ փոխադրուած է Բերա, Կալաթա-Մէրայի կից, թիւ 255, ուր խիստ գիւրաւատուցիկ փնտրով ամէն տեսակ լուսանկարներ կը պատրաստուին:

1—3

ԲԱՌԱՑՈՒՑԱԿ ԱԲՏԱՆՈՒԱՆՑ

ՖԻԱՆՍԵՐԷՆԷ Ի ՀԱՅ

Բ. սպազրուքիւն՝ սրբագրուած ու նոխայած

Աշխատասիրեց

ՏՈՔԹ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ

Կը պարունակէ աւելի քան 1350 բառ ու բանց իր 350ը աշխատասիրողին յօրինածներն են: Գին 3 գրուշ: Վաճառման կեդրոնատեղիներն են՝ Պոլիս, Մարգարեան գրավաճառանոցը եւ Բերա, Վէյսի գրավաճառանոցը:

2—4